

Մարզպետ Աշոտ Սիմոնյանի հանդիպումը մարզային փրկարարական վարչությունում
21.02.2018

Փետրվարի 21-ին ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանը աշխատանքային հանդիպում ունեցավ մարզային փրկարարական վարչությունում: Մարզպետը ծանոթացավ փրկարարական վարչության կողմից իրականացված աշխատանքներին եւ առաջիկա ծրագրերին: Զննարկվեցին բնածին եւ տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետեւանքների վերացմանն ուղղված համատեղ միջոցառումների մշակման եւ իրականացման հարցեր: Կատարվեց շոջայց՝ վարչության տարածքում, որի ընթացքում մարզպետին ցուցադրվեցին Աշտարակի ՀՓԶ-ին հատկացված նոր տեխնիկաները եւ փրկարարական գործիքները: